ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Էդվարդ Ջեյմս Ռիդ

Որ մոդելների ուսումնասիրությունը խիստ կարևոր է իրական օբյեկտների հատկությունները լավ հասկանալու համար, կարծես թե կասկած չի հարուցում: Սակայն, պատմությունը պահպանել է ցավալի իրադարձությունների վավերագրություններ, երբ մոդելային հետազոտությունների արդյունքներին բավարար ուշադրություն չեն դարձրել: Այսպես, 1870 թ. անգլիացիներն ստեղծեցին այն ժամանակի ամենահզոր «Կեպտեն» կոչված զրահակիր հածանավը: Այդ ժամանակ հայտնի նավաշինարար-գիտնական Է. Ռիդը հետազոտություններ կատարեց այդ նավի ֆիզիկական մոդելի վրա և հայտնաբերեց կառուցվածքային լուրջ թերություններ: Նա հայտարարեց, որ նկատելի բեռնվածության դեպքում նավի կայունությունը խիստ վատանում է և խորտակման վտանգը մեծանում: Սակայն, գիտնականի հայտարարություններին ոչ ոք ուշադրություն չդարձրեց և արդյունքում բաց ծով դուրս գալով հածանավը խորտակվեց, իջելով նաև 500 նավորդի կյանք: